

Ա. ԵՐԻԱՆԳԵԱՆ

Ծ Ծ Ո Ւ Մ Բ Ը

ԻՐԻԵԻ ԲՈՒԺԻՉ ՄԻՋՈՑ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Երեւնի ցկարհերով)

Թարգմ. Գ. ԽԱՐԱԶԵԱՆ

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «Հերմէս», Գրաֆսկայա փող. № 6

1914

632
Ե-95

11 APR 2013

17642

60
73-18

630
31-61

6. ԵՐԽԱՆԴԵԱՆ 24 SEP 2010
6-95
պ.

ԾՄՈՒՄԲԸ ԻԲՐԵԻ ՈՒԺԵՂ ՄԻՋՈՑ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

„Кавказское Хозяйство“ № 23—1913 г.

(Թարգմ. Գ. Մարազբան)

10631

Այգեգործութեան և բամբակագործութեան զարգացման հետ մեզանում առաջ եկան զանազան հիւանդութիւններ, ինչպէս օրինակ՝ թողը, չոռը և այլն, սրա հետ միաժամանակ արագութեամբ մեծացաւ նաև ծծմբի (քուքուրթի) գործածութիւնը: Եթէ առաջ ամբողջ Անդրկովկասը գործ էր անում ծծումբ հարիւր կամ հազար փթով, այժմ նրա պահանջը հարիւր հազար փթերի է հասել և մօտիկ ապագայում, երբ գիւղացիութիւնը կը լուսաւորուի մի փոքր աւել, ծծումբի նոր գործածողների թիւը հասնելու է տասնեակ հազարների:

Այդ պատճառով անհրաժեշտ է ծանօթանալ ծրծմբի բոլոր այն տեսակների հետ, որոնք ներկայումս գտնուում են շուկայում, որովհետև անփորձ գիւղատնտեսը չը գիտէ, թէ որ ծծումբն է լաւ և նրա որ տեսակին կարելի է հաւատ ընծայել: Շատ անգամ այգեգործի կամ բամբակագործի ձեռքը այն տեսակ ծծումբ է ընկնում, որի մասին լաւ ձևով են յայտարարել ու շատ գովել, թէև նա այն չէ, ինչ որ ցանկալի է: Այսպիսով առաջ են գալիս զանգատներ, որ իբր թէ այս

221
631

ինչ տարին ծծումբը շատ լաւ էր աղում և այգիներն ու բամբակները բժշկւեցին հիւանդութիւններից, իսկ այն ինչ տարում բժշկութիւնը իզուր անցաւ և բերքը ոչնչացաւ. մի քանիսը մինչև անգամ կարծում են, որ հիւանդութիւնը վարժելով ծծմբին՝ այլևս նրանից չէ ոչնչանում...

Բայց լաւ ստուգելուց յետոյ՝ երևացել է, որ ծծումբը վերջին ժամանակ փոխանակ յայտնի ֆիրմաներից՝ ձեռք է բերւած տեղական վաճառականներից կամ խանութպաններից էժան գնով և որը այդ պատճառով էլ անպէտք է եղել:

Թէև ծծմբի փոշու ամեն տեսակն էլ ընդունակ են բժշկել օրդիումը, բայց նրանց քանակութիւնը և նրանցով բժշկելու պայմանները գործածելիս՝ միևնոյնը չեն:

Ծծմբի բոլոր ծախսող տեսակները կարելի է բաժանել երկու գլխաւոր խմբերի վրա՝ թորւած ծծմբափոշի կամ ծծմբի ծաղիկ և ձեծած ծծումբ: Միւս բոլոր տեսակները այս երկուսի խառնուրդներիցն են պատրաստւած:


Ծծմբի ծաղիկը կամ Սիբլիմէ (Soufre Sublimé) կամ (Soufre en fleur) ստացւում է ծծումբը գոլորշիացնելով (թորեցնելով) և այդ պատճառով նրան անւանում են նաև թորած ծծումբ:

Սովորաբար ծծումբը հալում են փակ ամանի մէջ և տաքութիւնը աւելացնելով՝ դարձնում են նրան գոլորշի, որ յատուկ խողովակներով մտցնում են ամեն կողմից պինդ փակւած մեծ սենեակների մէջ: Այնտեղ ծծմբի գոլորշին սառելով՝ նստում է դեղնագոյն բարակ փոշու նման,

Այս ձևով ստացւած ծծմբի փոշին լինում է ամենամաքուր և ոչ մի խառնուրդ չի ունենում: Նա շատ է թեթևանում և ստանում է ուրիշ շատ հարկաւոր յատկութիւններ, որոնց մասին կը խօսենք յետոյ:

Ծծմբի փոշին հաւաքում ու մաղում են, որից յետոյ և ծախում են:

Այդ փոշու մասնիկները խոշորացոյցի մէջ երեւում են շատ փոքր գնդակների նման, որոնք յաճախ կպած են լինում կողք-կողքի:



Նկ. 1. Միկրոսկոպի տակ թորւած ծծմբափոշու հատիկները (մեծացրած 1200 անգամ):

Բացի այդ գնդիկներից ծծմբի փոշու մէջ պատահում են նաև ոչ աւելի քան 10—12 տոկոս ծծմբի բերեղներ (կրիստալներ):

Սովորաբար ծծումբը ամբողջապէս լուծուում է ծծմբածխածնի մէջ (сѣроуглеродъ, Sulfure de carbon), բայց գոլորշիացմամբ ստացւած ծծմբի ծաղիկը ամբողջապէս չէ լուծուում նրա մէջ, որ և կազմուում է նրա առանձնայատկութիւններից մէկը: Այս հանգամանքը առանձնապէս ուշադրութեան արժանի է այն պատճառով, որ ծծմբի ծաղիկի չը լուծւող մասնիկներին են վերագրուում թորւած ծծմբափոշու շատ շուտ թթւածընանալու ընդունակութիւնը:


Եթէ ծծմբածաղիկի վրա լցնենք բորակաթթւում (азотная кислота, acide nitrique), իսկոյն նրանից կը բարձրանայ կարմիր փայլուն գոլորշի, որ տեղի չի ունենում, եթէ նոյնպէս լցնենք ձեծած ծծմբի վրա:

Սովորական ծծմբի հետ համեմատած ծծմբածաղիկի ծաւալը շատ աւելի մեծ է, այսինքն՝ ծծումբը վերին աստիճան թեթեւացած է և տերևներին աւելի հեշտ է կպչում:

Բոլոր յիշեալ յատկութիւնները, այսինքն՝ մանրութիւնը, թեթևութիւնը, կպչողականութիւնը, արագընթաց թթւածնանալը այն գլխաւոր գործոններն են, որ ծծմբածաղիկին հասցնում են օգտակարութեան տեսակէտից՝ ամենաբարձր աստիճանին:

Ծեծած ծծումբ (Soufre trituré): Սա ստացւում է ծծմբի կտորների կամ նրա հանքի ձեծիւոց: Նրան շատ հեշտ է ճանաչել խոշորացոյցով, որովհետև նա նման է առանց որոշ ձև ունեցող բլբերիներին, ինչպէս ջարդած խիճ:

Եթէ հաւասար որևէ չափով վերցնենք ծծմբածաղիկն ու ձեծած ծծումբը, կը տեսնենք, որ վերջինը կշռելիս՝ աւելի ծանր է:



Նկ 2. Ծծմբափոշու ձեծած հատիկները միկրոսկոպի տակ (մեծացրած 1200 անգամ):

Ծեծած ծծումբը լուծուում է ամբողջապէս ծծմբածխածնի մէջ և նա—ծծմբածաղիկից աւելի դժւար է թթւածանում:

Եթէ ձեծած ծծմբի վրա լցնենք բորակաթթւում, գոլորշիներ կերևան միայն տաքացնելուց յետոյ:

Ծեծած ծծուճքը ևս երկու տեսակի է լինում՝ համեմատաբար խոշոր, որ սովորաբար ծեծած են անուսնում և շատ բարակ, որ կոչուում է վանտիլէ (Soufre Ventile): Վանտիլէ ծծուճքը թէև սովորական ծեծած ծծմբից թեթև է, բայց և այնպէս անհամեմատ աւելի ծանր է ծծմբածաղկից:

Նրա բիւրեղների ձևը նման է խոշորացոյցի մէջ ծեծած ծծմբի բիւրեղներին, միայն աւելի մանր են: Իր ֆիզիքական կազմով Վանտիլէ ծծուճքը ծեծածից ոչնչով չէ տարբերուում: Նրա մանրութիւնը բոլորովին չի նպաստում թթւածնանալուն, այլ ընդհակառակ՝ հետու տեղեր փոխադրելիս այդ ծծուճքը իրար կպչուում ու քարանում է, այս վերջի հանգամանքը լաւ է յայտնի շատերին, որովհետև գործադրութեան ժամանակ գործիքների մէջ հաւաքուում ու խանգարուում է գործին:

Այսպիսով աւելորդ է գործածել վանտիլէ ծրծուճքը, սովորական ծեծածի տեղ, մանաւանդ որ նա նրանից աւելի թանգ է:

Ծեծած ծծուճքի պատրաստելը անհամեմատ աւելի հեշտ է և այդ է պատճառը, որ նրա գինը ծծմբածաղկից $\frac{1}{3}$ մասով պակաս է:

Դեռ 1856 թ. յայտնի ֆրանսիական գինեգործ Մարէն ցոյց տւեց, որ այգու միևնոյն տարածութիւնը ծածկելու համար ծծմբածաղկից ծախսում է 100 մաս, իսկ ծեծած ծծմբից՝ 175 մաս, այսինքն՝ աւելի քան մէկ ու կէս անգամ:

Նոյնպէս սխալ է այն կարծիքը, թէ ծեծած ծրծուճքը աւելի լաւ է մնում տերևների վրա, քան ծրծմբածաղկիլը:


Վերոյիշեալ հանգամանքները մեղ ապացուցում են, որ անհրաժեշտ է բացառապէս գործածել թորած ծծմբածաղկը, որ ֆիրմային էլ պատկանելիս լինի նա, միայն թէ նրա հետ չը լինեն խառը ուրիշ տեսակներից:

Աչքի առջ ունենալով ծծմբածաղկի բարձր յատկութիւնները, որ ստացուում է միմիայն թորեցնելով և որ, ի հարկէ, աւելի թանգ է նստում, քան ծեծելը, գործարանատէրերի մեծ մասը, կամենալով իբր թէ էժան ծծուճք մատակարարել, սուբլիմէ-ի, այսինքն թորած — ծծմբածաղկի անուսնով ծախում են այն տեսակ ծծուճք, որ բաղկացած է ծեծած և թորած ծծմբի խառնուրդից:

Այս բոլոր խառնուրդները ծախուում են զանազան անուսններով՝ Սուբլիմէ, Սուբլիմէ № 1, էքստրա Սուբլիմէ, Սուբլիմէ Կոմերսիալ, Ֆլեօր դը Սուֆր և այլն:

Մոշորացոյցով քննելիս շատ հեշտ է այդ խառնուրդների մէջ նկատել ինչպէս ծեծած ծծմբի բիւրեղները, նոյնպէս և ծծմբածաղկի գնդիկները:

Պարզ է ինքըստինքեան, որ այդ տեսակ խառնուրդները չեն կարող ունենալ մաքուր ծծմբածաղկի նման բարդ յատկութիւններ: Եւ այդ պատճառով պէտք է առհասարակ զգուշանալ այդ տեսակ խառնուրդներից, որովհետև հարկաւոր ներգործութիւնը ստանալու համար, նրանցից պէտք է գործածել աւելի մեծ քանակութեամբ, քան մաքուր ծծմբածաղկը. մանաւանդ այդ դէպքում բացի աւելի թանգ նստելուց՝ աւելանում է ծծմբափոշի ցանկու աշխատանքը: Այդպիսով այդ էժան ծծուճքը շատ աւելի թանգ է նրստում մաքուր ծծմբածաղկից:



Թորւած և ձեծւած ծծմբափոշու խառնուրդի հատիկները (մեծաց. 450 անգ.)

Կայ դարձեալ մի տեսակ ծծմբափոշի, որ անւանում են «Հաւարած» ծծումբ (Soufre précipité): Այս ծծումբը ստացւում է իբրև աւելցուկ գազի գործարաններում, նա իր մէջ մաքուր ծծումբ պարունա-

կում է միայն 24—40 տոկոս և 60—70 տոկոս բոլորովին օտար նիւթեր, որոնք ոչ թէ միայն ոչինչ օգուտ չեն տալիս, այլ և շատ անգամ իրենց մէջ պարունակում են բոյսերի համար ֆլասակար բաղադրութիւններ: Այդ պատճառով բոյսեր բժշկելիս՝ այդ ծծումբը պէտք է բոլորովին չգործածել:

Բարեբախտաբար նա դեռ ևս մեր շուկաներում չի կրեւում և իբրև անպէտք բուժիչի, այստեղ աւելորդ ենք համարում նրա մասին ընդարձակել:

Ֆրանսիայում, ուր ծծմբի գործածութիւնը արդէն կենսական մի խնդիր է դարձել, օրէնքը շատ խիստ կերպով է պաշտպանում ծծումբ գործածողների շահերը գիւղատնտեսութեան մէջ և 1911 թ. մայիսի 20-ից գործադրւում է երկրագործական և Առևտրաարդիւնաբերական նախարարութիւնների կողմից 1907 թ. մշակած օրէնքը, որի հիման վրայ ճշգրիտ կերպով որոշւած է, թէ ինչ անունների տակ ինչ տեսակի ծծումբ պէտք է հասկանալ և ցոյց են տրւած ծծումբ որոշելու ձևերը:

Օրէնքը անա այսպէս է որոշում զանազան ծծումբների անունները՝ ծծմբածաղիկ, որ ստացւել է ծծումբը թորելիս առաջացած գոլորշիներից, նա կազմւած է ամենամանր գնդիկներից, որոնց հետ խառն է 10—12 տոկոս միայն բիւրեղիկներ, իր մէջ պարունակում է 12 տոկոսից աւելի այն մասնիկներից, որոնք ծծմբաածխածնի մէջ բոլորովին չեն լուծւում, նա պէտք է բաղկացած լինի ոչ պակաս քան 98 1/2 տոկոս մաքուր թորած ծծումբից, կէս տոկոսից ոչ աւելի խոնաւութիւն և կէս տոկոս մոխիր: Ծեծած ծծումբը

պէտք է պարունակէ ոչ պակաս քան 97 տոկոս անմը-
շակ ծծումբ, կէս տոկոսից ոչ աւելի խոնաւութիւն և
2 տոկոսից ոչ աւելի մոխիր:

Ծծումբը քննելու համար օրէնքը խորհուրդ է
տալիս՝ հատիկների մանրութիւնը նշանակել մաղի այն
համարներով, որ մաղի միջով ծծումբը անցնում է ա-
ռանց աչքի ընկնող մնացորդի: (Մաղերի համարնե-
րը որոշուում են ծակոտիների այն քանակութեամբ, որ
նրանք ունենում են մէկ դիւրիմ քառակուսի տարածու-
թեան վրայ):

Սոնաւութիւնն ու մոխրի քանակութիւնը որոշի-
լու համար պէտք է վերցնել կշռած դատարկ Փար-
ֆօրի կապսիւլ, լցնել նրա մէջ 5 գրամ ծծումբ և դը-
նել չորացնող գործիքի մէջ ու պահել 2 ժամ՝ պահ-
պանելով 90—95 տաքութեան աստիճան Յելսի: Յե-
տոյ պէտք է սառեցնել էքսիկատորի մէջ ու նորից
կշռել: Առաջին և երկրորդ կշեռների մէջ եղած տար-
բերութիւնը ցոյց կտայ խոնաւութեան կշիւր: Սրա
նից յետոյ նոյն կապսիւլի մէջ այդ ծծումբը վառում
են: Ծծումբի այրելուց յետոյ եղած մնացորդը նորից
կշռում է և ստացւում է օտար խառնուրդների քա-
նակութեան կշիւր:

Ծծմբի չլուծող մասնիկների քանակութիւնը ո-
րոշուում է հետևեալ ձևով.

Ապակէ պնդանով մի շիշի մէջ լցնել 90 խորա-
նարդ սանտիմետր ծծմբա-ածխածին և աւելացնել նը-
րա վրա քննող ծծմբից 3 գրամ: Բերանը փակելուց
յետոյ՝ մի քիչ թափահարել, որ պէտք է հետևողաբար
կրկնել կէս ժամից, մի ժամից և ժամ ու կէսից յե-
տոյ: Վերջին թափահարելուց 2 ժամ անց, վերցնել

պիպէտով (ապակէ սրածայր խողովակ բաժանմունք-
ներով ըստ սանտիմետրի) վերին շերտերից՝ առանց
պղտորելու 30 խորանարդ սանտիմետր: Վերցրած հե-
ղուկը պէտք է տաքացնելով ցամաքացնել: Ցամաք
ստացւած ծծումբը կշռելուց յետոյ՝ կիմացել թէ մի
գրամ ծծմբի մէջ ինչքան լուծող մաս է պարունակ-
ւում:

Այս գործողութիւնը մեծ զգուշութիւն է պահան-
ջում, որովհետև ծծմբա-ածխածինը 170 աստիճան տա-
քութիւնից վառում ու բռնկւում է: Վերոյիշեալ փորձը
լաւ է կատարել բոնեմական ամանի մէջ:

Օրէնքը առանձին նշանակութիւն է տալիս խո-
շորացոյցով քննութեան, որը միակն է ծծմբածաղկի
մէջ ձեծած ծծմբի ներկայութիւնը իմանալու համար:
Ծեծած ծծումբը շատ հեշտ է խոշորացոյցով ճանաչել,
չնորհիւ նրա բիւրեղների անձևութեան, որ նման են
են ջարդած քարի կտորներին: Միևնոյն ժամանակ
օրէնքը զգուշացնում է, որ ծծմբածաղկի բնական
բիւրեղները ձեծած ծծմբի բիւրեղների հետ չը շփ-
թեն:

Ծծմբածաղկի հետ ձեծած ծծմբի խառնուրդի
քանակութիւնը որոշելու համար խորհուրդ է տալիս
համեմատական մեթոդը, այսինքն՝ առաջուց պատրաս-
տել զանազան խառնուրդներ և քննելու ծծումբը հա-
մեմատել խոշորացոյցով այդ նախապատրաստած խառ-
նուրդի հետ և այդպիսով որոշել բիւրեղների քանա-
կութեամբ խառնուրդների որ մէկին աւելի նման է:

Շնորհիւ այս օրէնքի Ֆրանսիայում դատարան-
ների միջոցով պատժել են շատ անբարեխիղճ գոր-
ծարանատէրեր, որոնք կեղծ ապրանք են ծախում:

ի հարկէ, պարզ է, որ մեզանում ևս անհրաժեշտ է ունենալ այդ տեսակ մի օրէնք:

Բայց քանի որ մեզ մօտ դեռ գոյութիւն չունի այդ օրէնքը, ծծմբածաղիկ պատւիրելիս պէտք է ծախողին գրաւոր կերպով պարտաւորեցնել գնողին մաքուր ծծմբածաղիկ յանձնել, առանց ծեծած ծծմբի խառնուրդի: Նոյնպէս կարելի է պայմանաւորել, եթէ ծծմբածաղիկը ենթարկւի լաբորատօրիայում խոշորացուցական քննութեան և երևան հանւի կեղծիքը, այն ժամանակ ծծմբածաղիկ ծախողը պատասխանատու է տւած ֆրասին և նա նմանապէս կը պատժւի, ի հարկէ, և իբրև խարբբայ:



Նկ. 4. Բուզայի ծծրմբաքսակի (6 փթանոց) արտաքին տեսքը:

Այս բոլորը մատչելի է միայն խոշոր գործածողներին, ինչպիսիք են՝ կօօպերատիւ ընկերութիւնները,

գիւղատնտեսական և այլ հիմնարկութիւնները: Սակայն ինչ պէտք է անէ փոքրիկ սպառողը. նրա համար վերոյիշեալ միջոցները ձեռնառու չեն կարող լինել աւելորդ ծախքի շնորհիւ:

Առ ժամանակ այդպիսիներին կարելի է խորհուրդ տալ միակ միջոցը, այդ այն է՝ որ նրանք չը պէտք է էժանութեան յետևեն, այլ բացառապէս ծծումբը ձեռք բերեն յայտնի և արժանահաւատ առևտրականների տներէց: Ի միջի այլ ֆիրմաների կարելի է մատնանիշ անել Բուզ գործարանի ապրանքը, որի ծծմբածաղիկը լաւ յայտնի է կովկասում և կարելի է ձեռք բերել ամեն տեղ, մանաւանդ գիւղատնտեսական ընկերութիւնների միջոցով:

Վերջացնելով ներկայ յօդածը՝ հարկաւոր ենք համարում ասել և այն, որ ծծմբի փոշու մանրութիւնը իմանալու համար օգտուում են մի քանի տեղ Շանսելի գործիքից, բայց նա միևնոյն փոշին այնքան տարբեր կեպով է ցոյց տալիս, թւերը այնքան տարբեր են լինում, որ Փրանսիայում ծծմբի օրէնքը մտցնելիս՝ Շանսելի գործիքի վրա ոչ մի ուշադրութիւն չը դարձեց, այլ բացառապէս ընդունեց մաղերի սիստեմը, իբրև ամենանպատակայարմարը:

Այդ պատճառով էլ Շանսելի խողովակը մեզանում ևս պէտք է հանել բոլորովին գործածութիւնից:

Ն. Նրանդեան
« Ազգային գրադարան »
NL0293448

17642

Dr. [illegible]